Արձանագրություն 03 /գնահատման նիստ/

«ՀՀԳՀԿԱ-ԳՀԾՁԲ-01/19» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի
22.04.2019թ. Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ինգա Ավագյան - թանգարանի տնօրեն

Հանձնաժողովի անդամներ՝

Պարույր Զաքարյան – թանգարանի գիտաշխատող
Հրաչ Քյոսաբաբյան - թանգարանի գիտաշխատող

Հանձնաժողովի քարտուղար՝

Պայծառ Մուրադյան /քաղ. իրավական պայմանագիր/

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

1.Ընդունել ի գիտություն, որ
1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում ներկայացվեց ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորության առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում եզրակացություն ներկայացվեց, ըստ որի մասնակիցն ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն /114 000 ՀՀ դրամ/, ուստի համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի, մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը չհամապատասխանող և մասնակցի հայտը ենթակա է մերժման,

1.2 «ՀՀԳՀԿԱ-ԳՀԾՁԲ-01/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը,

- Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերի երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին,

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով գնահատող հանձաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյան	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. «ՀՀԳՀԿԱ-ԳՀԾՁԲ-01/19» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը՝ «ՀՀԳՀԿԱ-ԳՀԾՁԲ-01/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի հայտը մերժել:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետը՝

5. Գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ի. Ավագյան

Անդամներ՝ ---------- Պ. Զաքարյան

---------- Հ. Քյոսաբաբյան

Քարտուղար՝ ---------- Պ. Մուրադյան